« ԱՐՄԱՎԻՐ 1 » ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ « Դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը »

Դպրոց՝ Նորապատի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Արմենուհի Գրիգորյան

Վերապատրաստող ուսուցիչ՝ Հ. Պողոսյան

Բովանդակություն

Նախաբան 2

Գրականության ակնարկ 4

Գործնական համատեքստ 5

Ամփոփում 17

Օգտագործված գրականություն 18

Դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը

1. Նախաբան

Համագործակցություն. Մենք խեղդվում ենք կամ լողում միասին։

Բանալի բառեր՝ կրթական համակարգ, համագործակցային ուսուցում, ուսումնառություն, փոխկապվածություն, պատասխանատվություն, հաղորդակցում, կարծիքների փոխանակում, մեկնաբանություն:

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց փոխվում են դպրոցին ներկայացվող պահանջները։ Նոր իմաստ և ուղղվածություն է ստացել նաև ուսուցման նպատակը։ Միայն ավանդական մեթոդների կիրառումն այսօր դիտվում է որպես ժամանակավրեպ երևույթ։ Փորձը ցույց է տալիս , որ այդ ուսուցումը չի ապահովում սովորողների արդյունավետ հարմարումը հասարակությանը։ Ավանդական ուսուցչակենտրոն ուսուցումը շեշտադրում է գիտելիքներն ու դրանց յուրացումը։ Մինչդեռ անհրաժեշտ է նկատառել աշակերտների կարիքների, հետաքրքրությունների և որոշակի կարողությունների ձևավորումն ու զարգացումը։

Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով։ Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների։ Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն բարեկեցիկ կյանքով ապրելու համար։ Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները։

Այլընտրանքային նոր մոտեցումների շարքին է դասվում համագործակցային ուսուցումը։ Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից։

Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում։ Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի։ 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը։

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության։ Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-

ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս։

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման։ Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Մարդը միշտ էլ ձգտում է, որ կյանքում ունենա աշխատանքային հաջողություններ։ Անշուշտ, կրթությունն այդ հարցում մեծ դեր է խաղում։ Բայց միայն դա բավական չէ։ Արդի շուկայական հարաբերությունները շրջանավարտներից պահանջում են այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք հնարավորություն կտան նրանց ապագայում իրենց աշխատանքի մեջ ունենալու հաջողություններ։ Այսինքն՝ նրանք կարիք ունեն տիրապետելու առանձին մարդկանց և աշխատանքային կոլեկտիվի հետ համագործակցելու կարողությունների։ Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է ոչ միայն կրթել դպրոցականներին, այլև սովորեցնել նրանց հաղորդակցվել, զարգացնել համագործակցելու համար անհրաժեշտ որակներ, որոնց մասին ամրագրված է բոլոր առարկայական չափորոշիչներում։ Սոցիալական, հաղորդակցական, մարդկանց միջև փոխհարաբերությունների կառուցման կարողությունների ձևավորումն այն կարևորագույն խնդիրերից է, որոնք լուծվում են խմբային աշխատանք կատարելու ընթացքում։

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է։ Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը։ Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն։ Հենց այդ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում։ «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում , երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»։

Ուսուցիչն այնպես է կառուցում դասը,որ աշակերտները միասին են աշխատում՝ առավելագույնին հասցնելու սեփական և յուրաքանչյուրի ուսումնառությունը.

- աշխատում են փոքր խմբերում,
- պայքարում են խմբի բոլոր անդամների հաջողության համար,
- ինչից շահում է մեկը, շահում են բոլորը,
- համատեղ հաջողությունը տոնվում է,
- պարգևները դիտարկվում են որպես անսահմանափակ հնարավորություն,
- գնահատվում են՝ համեմատելով կատարած աշխատանքը սահմանված չափանիշների հետ։

2. Գրականության ակնարկ

Հիմնվելով վերոնշյալ տեսությունների և դիտարկումների վրա՝ հետազոտական աշխատանքը գրելու համար փորձել եմ օգտվել ժամանակակից մանկավարժական գրականությունից, ուսումնասիրել եմ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային միջոցների կիրառման արդյունավետությունը: Փորձել եմ հասկանալ՝ որքանով է առաջադրված փորձը նպաստելու սովորողների համագործակցային կարողությունների զարգացմանը:
Այս հարցում էական էր Ս.Գ. Խաչատրյանի կողմից մշակված մեթոդների ու հնարների արդյունավետության հիմնավորումը (Խաչարյան Ս.Գ. «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի, 2006, 96 էջ):
Արծարծված հիմնական միտքն այն էր,որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:
Մի շարք հեղինակներ հիմնավորում են, որ համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում (Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ): Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում ՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումը և ձեռքբերումը:

Ուսումնասիրել եմ պատմության դասավանդման ընթացքում համագործակցային ուսուցման եղանակները («Համագործակցային ուսուցման համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին» Սահակյան Վ.Ա. Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004թ, 178 էջ:) : Կատարել եմ եզրահանգումներ և ընդհանրացումներ. խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել,թե սովորողները որքանով են արդյունավետ գործել որպես խմբի անդամներ: Սա ներառում է խոսելու,լսելու,մտքերը կիսելու,խմբին օգնելու,աջակցելու հմտությունները: Անհրաժեշտ է հետևել՝ արդյոք խմբի բոլո՞ր անդամներն էին մասնակցում աշխատանքին, խմբում կայի՞ն գերիշխող աշակերտներ, խմբային հաղորդակցումն աջակցո՞ղ էր:

Մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցի կառուցողական կրթության հիմունքները (Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի. «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, 336 էջ:)

Օգտվելով համացանցից՝ հատվածներ կարդացի Ռ. Ջոնսոնի, Դ. Ջոնսոնի, Ջ. Քերոլի, Բ.Բլումի աշխատություններից, ռուս մանկավարժ Մ.Վ. Կլարինի հետազոտական նյութերից: Զարգացնող համագործակցային ուսուցման գաղափարների կայացման հարցում նշանակալից է Վիգոտսկու և նրա երկերի դերը: Նրա մանկավարժական աշխատության մեջ այն միտքն է գերակշռում,որ զարգացման որոշակի փուլում երեխան, մեծահասակի ղեկավարությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով, կարող է ուսումնական խնդիրներ լուծել:

Այսպիսով՝ ուսումնասիրեցի գիտական և գիտամեթոդական գրականություն, կատարեցի տեսական վերլուծություններ, միաժամանակ հիմք ընդունեցի շուրջ երեսուն տարվա մանկավարժական իմ փորձը և սկսեցի գրել հետազոտական այս աշխատանքը:

3. Գործնական համատեքստ

Այս հետազոտական աշխատանքը գրվում է մի ժամանակահատվածում, երբ ավարտվել է ուսումնական տարին, սովորողները արձակուրդում են, այն է՝ հետազոտվող թիրախային խմբի՝ դասարանի հետ աշխատելու փոխարեն հիմնվում եմ իմ անցկացրած դասերի ընթացքում հանդիպած հիմնախնդիրների վրա:

Ուսումնառության ոչ դյուրին գործընթացին ներկայացվող արդիական պահանջները ենթադրում են համակողմանի, բազմափուլ և լուրջ ստեղծագործական աշխատանք: Հիմնական խնդիրներից են՝

- գիտելիքների որոշակի հանրագումարի հաղորդում,
- կյանքում դրանց կիրառման կարողությունների ձևավորում
- սովորել սովորեցնել,
- որոշակի անհրաժեշտ կարողությունների և հմտությունների մշակում,
- քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացում:

Ավանդական ուսուցման սկզբունքներով կազմակերպված դասարանը կարելի է բնութագրել իբրև մի խումբ, որը կառավարվում է ուսուցչի կողմից: Վերջինս հանդես է գալիս որպես գիտելիքների հաղորդող, ղեկավարող, որոշում կայացնող և վերահսկող: Նա հիմնականում առաջնորդվում է ղեկավարման ավտորիտար ոճով: Աշակերտներն այս դեպքում սովորողներ և կատարողներ են:Նման դերերը սահմանափակում են երեխաների ինքնուրույնությունը: Նրանք զրկվում են որոշումներ կայացնելու և ընտրություն կատարելու հնարավորություններից: Այսպիսի իրավիճակները չեն նպաստում ստեղծագործական և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Ավանդական ոճով կազմակերպված դասարաններում երեխաների միջև բավականին ուշ են ձևավորվում ջերմ հարաբերություններ: Ցածր է փոխկապվածության աստիճանը: Մինչդեռ շփումների նպատակը տեղեկատվության փոխանակումը և առաջադրանքների կատարման եղանակների պարզաբանումն է: Յուրաքանչյուր աշակերտ աշխատում է անհատապես, և ինքն է պատասխանատվություն կրում իր իսկ կատարած աշխատանքի համար: Միմյանց հետ շփվելու հնարավորություն ստեղծում են դասամիջոցները: Դրանք, հասկանալի է, բավարար չեն կարող միմյանց լավ ճանաչելու, հաղորդակցվելու և համագործակցելու առումով:

Համագործակցային ուսուցումը աշակերտակենտրոն է: Երեխաներն ուսուցման գործընթացի մեջ ներգրավվում են խմբերով, որոնք անընդհատ փոփոխվում են: Այդ կերպ ապահովում են շփումը դասարանի բոլոր աշակերտների միջև: Համագործակցային խմբերը միավորվում են ընդհանուր նպատակի շուրջ: Դա նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը : Սովորողներն ակտիվորեն մասնակցում են գործընթացին, և ուսուցիչը կարողանում է աշխատել բոլորի , այլ ոչ թե միայն ընդհանուր ճակատի հետ:

Համագործակցային ուսումնառությունը նպաստում է դասարանում ջերմ, դրական մթնոլորտի արագ ձևավորման: Աշակերտներն անընդհատ շփվում են միմյանց հետ, քննարկումների մասնակցում, որոշումներ կայացնում ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով: Յուրաքանչյուրը պատասխանատվություն է ստանձնում ոչ միայն իր, այլև խմբի համար: Արդյունքում գիտելիքի յուրացման հետ մեկտեղ ձևավորվում են հանդուրժողականություն, համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Աշակերտերին փոխօգնության հնարավորություն է ընձեռվում: Ավանդական ուսուցմամբ պարտադրվում են ոչ հավասար պայմաններ, և առանձնանում են լավ և վատ սովորող աշակերտներ (հատկապես տարրական դպրոցում): Անջրպետն այս դեպքում վերանում է:

Փոխվում են նաև ուսուցչի և աշակերտների դերերը: Ուսուցիչը հանդես է գալիս որպես կազմակերպիչ, մասնակից, խորհրդատու, աջակից, ոգևորող, իսկ աշակերտները՝ որոշումներ կայացնողներ, ընտրություն կատարողներ և այլն: Ամեն ինչ համաձայնեցվում է ուսուցչի և աշակերտների միջև: Լայն հնարավորություններ են ստեղծվում ստեղծագործական կարողությունների զարգացման իմաստով: Ուսուցումը դառնում է ոչ թե պարտականություն , այլ հաճույք: Յուրաքանչյուր աշակերտ անընդհատ թե՛ ուսուցչի, թե՛ համադասարանցիների ուշադրության կենտրոնում է գտնվում:

Համագործակցային ուսումնառության սկզբունքներով կազմակերպված դասարաններում աշակերտների միջև դրական փոխկապվածություն է ձևավորվում: Նրանք սոցիալական աջակցություն են ցուցաբերում միմյանց հանդեպ: Նման միջավայրում երեխաները կարողանում են ճանաչել և՛ իրենց, և՛ միմյանց: Փոխադարձաբար դրական վերաբերմունք է մշակվում: Այս իրավիճակն օգնում է երեխային՝ հստակեցնելու ինքնագնահատականը: Դասարանում այնպիսի մթնոլորտ է ստեղծվում, ուր յուրաքանչյուր աշակերտ կարող է բաց, ուղիղ հաղորդակցվել և ի վիճակի լինել համարձակ քայլերի: Նրանց հնարավորություն է ընձեռվում զարգացնել սեփական կարողություններն ու հմտությունները, հաղթահարել դժվարությունները : Դպրոց հաճախելու առաջին իսկ պահից երեխան իրեն զգում է որպես խմբի անդամ: Բոլորը նրան հարգում են, սիրում և պատրաստ են օգնելու: Նման միջավայրն ակտիվացնում է նաև ուսուցման դրդապատճառները : Արդյունքնում ունենում ենք հարուստ գիտելիքներով զինված, համագործակցող, հանդուրժող, բանակցող, որոշումներ կայացնելու ունակ և ստեղծագործաբար մտածող աշակերտներ: Երեխաները որքան ավելի վաղ տարիքից են ներգրավվում խմբային աշխատանքներում , այնքան հեշտ և արագ են ընտելանում դրանց: Այս հանգամանքը նպաստում է երեխայի արդյունավետ սոցիալացմանը:

Հաճախ ցածր ինքնագանահատականով երեխաներն ավանդական մեթոդներով կազմակերպված դասերի ժամանակ ամաչում են դաս պատասխանել և դրսևորել իրենց կարողությունները: Երկչոտությունն իր հերթին ազդեցություն է ունենում անձի սոցիալացման և զարգացման վրա: Կաշկանդում է այնպիսի դրական զգացմունքներ, ինչպիսիք են հետաքրքրությունը, ուրախությունը և այլն: Ոմանց մոտ նկատվում է ընկճվածություն, մեկուսացում, դպրոցից հիասթափություն, սովորելու ցանկության նվազում և կորուստ: Նույնիսկ բավականին ընդունակ երեխաները հաճախ դրսևորում են վատ առաջադիմություն: Երկչոտության բարդույթ առաջացնում են այնպիսի իրավիճակները, որոնցում անհատն զգայուն է այլ մարդկանց հույզերի, դիրքորոշումների, կարծիքների և գործողությունների նկատմամբ: Սոցիալական միջավայրն ու մշակույթն ամաչկոտության առաջացման հիմնական պատճառներից են: Դա արգելակում է սոցիալական հազորդակցումն ու միջանձնային շփումները:

Միայնակ դաս պատասխանելիս երեխաները վախենում են սխալվել և քննադատության արժանանալ ուսուցչի և ընկերների կողմից : Խմբային աշխատանքի դեպքում պատասխանատվությունը բաշխվում է խմբի բոլոր անդամների միջև: Գրեթե վերանում են անհատապես սխալվելու և ամաչելու պայմանները: Սովորողները դառնում են առավել համարձակ: Երբ բոլորն օգնում են միմյանց, լավ հարաբերություններ են հաստատվում, ավելի հեշտ է հաղթահարել ամաչկոտությունը: Այս հանգամանքը ևս շեշտադրում է համագործակցային ուսուցման առավելությունը:

Համագործակցային ուսուցումը նվազեցրեց անհատական և խմբակային հոգեբանական մարզումների անհրաժեշտությունը: Ըստ Դ. Ջոնսոն և Ռ. Ջոնսոն հեղինակների՝ համագործակցային ուսումնական միջավայր ապահովելու դեպքում կարելի է ակնկալել հետևյալ արդյունքները.

- գիտելիքների առավել բարձր և կայուն ձեռքբերումներ և մտապահում,
- բարձր մակարդակի տրամաբանության հաճախակի դրսևորում , ավելի խոր ընկալում, քննադատական մտածողություն,
- առավել նպատակաուղղված և կենտրոնացած վարքագիծ,
- հաջողության հասնելու մեծ շահագրգռվածություն և սովորելու ներքին մղումների դրսևորում ,
- իրավիճակն ուրիշի տեսանկյունից դիտարկելու կարողություն
- անկախ ազգային պատկանելիությունից, սեռից, ընդունակություններից, սոցիալական վիճակից կամ ֆիզիկական կարողություններից՝ առավել դրական, հանդուրժող և աջակից հարաբերությունների հաստատում,
- հասարակական բարձր ակտիվություն
- հոգեբանական առողջ մթնոլորտ , հարմարվելու կարողություն և բարձր ինքնազգացողություն ,
- առավել դրական դիրքորոշում սեփական անձի և դասավանդվող առարկաների, ուսուման ու դպրոցի նկատմամբ,
- առավել բարոյական վերաբերմունք ուսուցիչների, տնօրենների և այլ աշխատակիցների հանդեպ:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

- Ի՞նչ է պետք հաշվի առնել համագործակցային մեթոդը կիրառելիս

Կազմակերպման եղանակները պետք է ընտրվեն կրթության բովանդակության և անհրաժեշտ մեթոդաբանության, ինչպես նաև աշակերտների կարիքներին համապատասխան:

- Ճկունությունը

Տարբերակում կատարելը չպետք է դառնա աշակերտների «պիտակավորման» կամ «հայեցողական ընտրության» պատճառ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր համար օպտիմալ ծավալի աշխատանք:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին , ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Դասավանդման իմ փորձը հիմք է տալիս ասելու,որ ժամանակակից ուսուցիչը պետք է որդեգրի կառուցողական մոտեցում և կիրառի դասավանդման նորարարական մեթոդներ: Դասարանում կատարվող մեր աշխատանքին կարող են օժանդակել առկա ժամանակակից SS միջոցները և համակարգչային ծրագրերը:

Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ուսուցման ընթացքում սովորողները, հիմնական գիտելիքներից ու կարողություններից բացի, պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության,հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ: Նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը: Դասի պլանները պետք է կազմվեն՝ հենված մեթոդական տարբեր հնարների և եղանակների վրա: Մեր հանձնարարած առաջադրանքները պետք է լինեն բազմաբնույթ,հետաքրքրաշարժ, մտածական գործունեությունը խթանող,սովորածը այլ իրավիճակներում կիրառելուն միտված: Դասի նպատակները պետք է լինեն խիստ իրատեսական: Համագործակցային մեթոդը կիրառվող լավագույն գործիքներից մեկն է ՝ ապահովելու այս ամենը:

Համագործակցային աշխատանք իրականացնելիս՝

1. Առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որպեսզի խմբի անդամների հետ համագործակցված աշխատանքը տա զգալիորեն լավ արդյունք ,քան կարող է ստանալ անդամներից յուրաքանչյուրը, եթե նա միայնակ աշխատեր: Նպատակահարմար է կիրառել առաջադրանքներ, որոնք ՝

- պահանջում են ծավալուն աշխատանք
- պահանջում են այնպիսի բազմազան գիտելիքներ և կարողություններ, որոնց ամբողջությամբ չի տիրապետում ոչ մի աշակերտ, բայց խմբին դա հասանելի է,
- նպաստում են ստեղծագործական մտածողության զարգացմանը, որոնց կատարման համար պահանջվում են ոչ ստանդարտ բնույթի պատասխաններ:

2. Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքրի խմբի բոլոր անդամներին:
3. Առաջադրանքները ըստ իրենց բարդության աստիճանի, պետք է հասանելի լինեն տվյալ տարիքի երեխաների համար:
4. Առաջադրանքները պետք է լինեն խնդրահարույց, հնարավորություն տան ակտիվորեն կիրառելու ձեռք բերած գիտելիքները:

Երբ երեխան չի ցանկանում աշխատել խմբի կազմում, ապա ուսուցիչը կարող է ՝

- նախ պարզել, թե որն է պատճառը, որ նա չի ցանկանում աշխատել խմբում կամ դասընկերոջ հետ, և փորձի վերացնել այն,
- խմբային աշխատանքի կանոններում ընդգրկել «փոխադարձ հարգանքի ձևավորում» և «միմյանց հետ համերաշխ համագործակցություն» կետերը, քննարկել դրանք միասին, ընդունել և կիրառել. կանոնների չպահպանման դեպքում հիշեցնել, որ կանոնները մշակվել են միասին և ընդունվել են դասարանի բոլոր անդամների կողմից, այդ իսկ պատճառով դրանք պետք է պահպանել և սովորել համագործակցել ընկերների հետ,
- առաջարկել նրան փորձել աշխատել միասին ՝ նորից այդ հարցին անդրադառնալու պայմանով,
- սպասել, մինչև որ երեխան ինքը կունենա խորհրդի կարիք ,և միայն այդ դեպքում ցույց տալ, թե որքան կարևոր ու հետաքրքիր է աշխատել խմբով,
- բաշխել պարտականություններ, դերեր, բացատրել աշակերտին, թե որքան կարևոր պարտականություն ունի նա խմբում, զույգի հետ, որ առանց խմբի, զույգի նրա աշխատանքը կձախողվի,
- այդ աշակերտին տալ դիտորդի, փորձագետի դեր,
- օրինակի միջոցով բացատրել, թե որքան կարևոր է միմյանց հետ հաղորդակցվելը, խմբով աշխատելը, որքան դժվար է մենակ ծավալուն աշխատանք կատարելը ,
- հաշվի առնել նրա անձնային որակները, հետաքրքրությունների շրջանակը և համապատասխան խումբ կամ զույգ առաջարկել կամ հետաքրքրվել նրանից, թե ինքն ում հետ կուզենար աշխատել,
- անցկացնել խաղեր, որոնք կնպաստեն կոլեկտիվի ձևավորմանը։

Խմբային աշխատանքներ կարելի է կազմակերպել ՝ հիմք ընդունելով միայն երեխաների ցանկությունը։ Փոքր խմբերով աշխատանքը գերադասելի է կազմակերպել նախ զույգերով, ապա ավելի մեծ խմբերով։ Զույգերով աշխատելիս աշակերտները կվարժվեն համագործակցային աշխատանքին, կսովորեն լսել մեկմեկու , հաշվի նստել դիմացինի կարծիքի հետ, ընդհանրացնել ասելիքը։ Սա նախապայման կհանդիսանա ավելի մեծ խմբում աշխատելու համար։

Դասապրոցեսում կազմակերպում եմ զույգային աշխատանքի տարբեր տեսակներ, օրինակ՝

1. Միասնական աշխատանք, որի դեպքում երկուսն էլ կատարում են միևնույն գործը։
2. Յուրաքանչյուրը կատարում է մեկ գործողություն։
3. Հրահանգը կատարում են մինչև վերջ առանձին-առանձին։
4. Ամբողջ առաջադրանքը կատարում է առաջին աշակերտը, իսկ երկրորդ աշակերտը միայն վերստուգում է։

Աշխատանքի ընթացքում օգնում եմ զույգերին, վեր հանում հաջողություններն ու թերությունները, որպեսզի աշխատանքի ավարտից հետո այն դրվի ընդհանուր քննարկման։ Սկզբում բացատրում եմ զույգին, թե ինչպես պետք է նրանք աշխատեն, իսկ ավելի ուշ արդեն աշակերտներն իրենք են որոշում, թե ինչպես աշխատեն։ 1-2 աշակերտի հետ գրատախտակի մոտ ցույց եմ տալիս աշխատանքի ողջ ընթացքը՝ ուշադրությունը կենտրոնացնելով սխալների վրա։ Ընդ որում ՝ ուշադրությունը պետք է սևեռել ոչ թե բովանդակության, այլ փոխհարաբերությունների կազմակերպման վրա ։

«Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է։ Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և

օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում»: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում,
- սովորողների խմբերի ձևավորում,
- սովորողների տեղաբաշխում,
- առաջադրանքի ներկայացում և բացատրում,
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն,
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում,
- գնահատում:

Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Ուսուցիչը խմբային աշխատանքի ընթացքում կարող է ստանձնել տարբեր դերեր.

1. վերահսկել,
2. կազմակերպել,
3. գնահատել աշակերտների աշխատանքը,
4. մասնակցել խմբերի աշխատանքներին,
5. խմբի անդամներին առաջարկել լուծման զանազան տարբերակներ,
6. հանդես գալ ղեկավարի կամ տեղեկատվական աղբյուրի հետազոտողի դերում:

«Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին

հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Հաճախ եմ կիրառում համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք, քննարկում, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսում և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչներս կարող ենք այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար ***(*** Ջ ի գ սո ***, Jigsaw)*** : Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնեմ դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են

իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են .

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

4. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:
Համագործակցային ուսուցման ընթացքում երբեմն թույլ են տրվում սխալներ: Ես զգացել եմ, որ խմբի աշխատանքն արդյունավետ չէ, երբ խմբում ընդգրկված են 6 և ավելի աշակերտներ: Երբ աշակերտներին չեն ուսուցանվում համագործակցային հմտություններ, խմբային աշխատանքը ձախողվում է:

Չի կարելի համագործակցային խմբերին տալ միանգամից բարդ առաջադրանքներ,պետք է սկսել պարզ գործողություններից:

Եթե խմբի նպատակը միայն արդյունք ստեղծելն է, այլ ոչ թե դրան տանող ճանապարհը, ապա հավանականությունն այն բանի,որ աշխատանքը կարող է կատարել մեկ աշակերտ,իսկ մյուսները մնան անգործ, մեծ է: Դրանից խուսափելու ճանապարհը անհատական պատասխանատվություն ապահովող հանձնարարության առաջադրումն է:

Համագործակցության խմբի առաջադրանք կազմելիս , հանձնարարությունը ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել այն բանին, որ խմբի յուրաքանչյուր անդամ համոզվի, որ առաջադրանքը խմբով կատարելն ավելի արդյունավետ է, քան եթե փորձեն կատարել առանց համագործակցելու: Այդպիսի իրադրություն կարող է ստեղծվել մասնավորապես այն դեպքում, երբ խմբին հանձնարարվում է ուսումնասիրել մի նյութ, որի վերաբերյալ անդամներից յուրաքանչյուրը գիտի ինչ որ բան, բայց ոչ մեկը չգիտի նյութն ամբողջությամբ: Նման դեպքում խմբի անդամների մասնակցության հավանականությունը մեծանում է, և նրանք զգում են, որ համատեղ աշխատելու կարիք կա, ընդ որում մասնակիցներից յուրաքանչյուրը գիտակցում է, որ մյուսների հաջողությունը կախված է նաև իրենից: Առաջադրանքը կատարելիս պետք է հաշվի առնել աշակերտներին հետաքրքրելու

հանգամանքը: Առաջադրանքը պետք է իր մեջ ինչ- որ գործունեություն պարունակի, այդ թվում նաև նրանց համար, ովքեր կարծում են, որ այդքան էլ ի վիճակի չեն ամբողջությամբ կատարելու:

Համագործակցային դասի ժամանակ պետք է.

- խմբի յուրաքանչյուր անդամ ունենա աշխատանքներին մասնակցելու հնարավորություն,
- խմբի բոլոր անդամները պետք է ունենան արտահայտվելու հնարավորություն,
- խմբի անդամները պետք է կարողանան կատարել իրենց ընտրությունը և կայացնել որոշում:

Որպեսզի խմբի բոլոր աշակերտները մասնակցեն, ցանկալի է տալ մի քանի քայլից բաղկացած առաջադրանք: Խմբի անդամների միջև բաժանվում են առաջադրանքների քայլերը, որի ճիշտ կատարումից է կախված խմբի առաջադրանքի վերջնական արդյունքը, ուստի բարձրանում է յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը խմբի առաջ: Հաջորդ քայլով խմբի բոլոր անդամները իրար հաղորդում և ի մի են բերում բոլոր հարցերը , դրա հիման վրա էլ հանգում են միասնական վերջնարդյունքի: Եթե առաջադրանքը սկիզբ է դնում միմյանց հետ հաղորդակցման, ապա այն հնարավորություն է տալիս աշակերտներին մտքերը կիսելու, տեղեկություններ փոխանակելու և համատեղ որոշումներ կայացնելու:

Առանձնահատուկ կարևորություն ունի ուսումնական նյութի ինֆորմացիայի մուտքը, որի ապահովման արդյունավետ ձևերից է նյութի հաղորդմանը նախորդող աշխատանքի և հաղորդվող նյութի միջև խորքային կապերի ստեղծումը, նման դեպքում դասանյութի բացատրման ժամանակ ներկայացվող փաստերը, դեպքերն ու իրադարձությունները արթնացնում են ունկնդիրների հետաքրքրասիրությունը հաղորդվելիք նյութի նկատմամբ:

Առաջնորդվելով պետական առարկայական չափորոշիչային պահանջներով `ուսուցիչներս պետք է գիտակցենք դասի նպատակները,մշակենք դրանց հասնելու դյուրին և մատչելի ուղիները,միջոցներն ու հնարները: Մասնագիտական խոր և կայուն գիտելիքները, ուսուցման գործընթացի ժամանակակից ռազմավարության մշակումը, սովորել սովորեցնելու նախապայմանն ուսուցիչներիս օգնում են ուսուցման ընթացքում իրագործելու մեր առջև դրված հեռահար նպատակները, այն է՝ տվյալ դասարանի համար նախատեսված նյութի ուսուցումը կազմակերպել հետաքրքրաշարժ,հիմնավոր ձևերով ու եղանակներով՝ ձևավորելով ու զարգացնելով աշակերտների գիտելիքները, համագործակցային կարողունակությունները, վերլուծելու և սեփական մտքերն արտահայտելու կարողությունները:

Յուրաքանչյուր համագործակցային աշխատանք սկսելուց առաջ մենք մեր առջև պետք է դնենք նպատակ, վերջնարդյունքներն ապահովելու համար ուսումնասիրենք և հստակեցնենք այն խնդիրները,որոնց լուծումն էլ բերում է նպատակի իրագործմանը:

Ստորև ներկայացնում եմ գոյականի թվի վերաբերյալ մի աշխատանք, որը 7-րդ դասարանի աշակերտները ներկայացրել են համագործակցային աշխատանքի ընթացքում: Գոյականի կազմության ձևերը սովորողները ներկայացրել են գծապատկերներով:

Առաջին խումբ

ծառ-ծառեր

տուն-տներ



Երկրորդ խումբ



Երրորդ խումբ



Նմանատիպ աշխատանքը ապահովում է գիտելիքի յուրացումը նաև դիտողականության շնորհիվ:

4.Ամփոփում

Այսպիսով՝ համագործակցային ուսուցումը արդյունավետ է ոչ միայն գիտելիքների յուրացման, որոշակի կարողությունների և հմտությունների ձևավորման, քննադատական և ստեծագործական մտածողության զարգացման տեսանկյունից, այլև այն առումով, որ հոգեբանական դժվարությունների հաղթահարման մի շարք հնարավորություն ընձեռում։

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար։

Համագործակցային ուսումնառության արդյունավետությունը կախված է ոչ միայն մատուցվող նյութի, առաջադրանքի ինտերակտիվ սկզբունքներին համապատասխան կառուցումից, այլ նաև ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հարաբերություններում անկաշկանդ մթնոլորտի ստեղծումից ու ապահովումից։

Մայրենիի, հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույնությունը զարգացնելու համար ոչ թե աշակերտին պետք է կանգնեցնել սոսկ պարտականություն կատարելու կամ անհաղթահարելի թվացող դժվարություններ հաղթահարելու առաջ, այլ աշակերտի մեջ իմացական պահանջմունք և տվյալ նյութի մասին ավելի շատ բան իմանալու ցանկություն առաջացնել և նրան որոշակի գործողության մղել։ Արդյունքում ուսումնական աշխատանքը սովորողի համար դառնում է հաճելի ու հետաքրքիր , իսկ դժվարությունները՝ հեշտ հաղթահարելի, եթե նա ներառվում է խմբային աշխատանքներում և համագործակցում է իր դասընկերների հետ։ Այս դեպքում զգալիորեն բարձրանում է ուսուցման արդյունավետությունը , քանի որ ուսումնառության գործընթացին մասնակցում են ոչ թե մի քանի « ընտրյալ» աշակերտներ, այլ դասարանի գրեթե բոլոր աշակերտները։ Այսպիսով դասավանդվող առարկաները դառնում են մատչելի բոլորի համար։

Համագործակցային խմբի յուրաքանչյուր անդամ ընկալում է , որ ինքը չի կարող հաջողել առանց խմբի մյուս անդամների հաջողելու, կարևորում է «խեղդվել կամ լողալ միասին »հարաբերությունը։ Երեք հրացանակիրների նշանաբանը՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի, դրական փոխկախվածության օրինակ է ծառայում։ Ուսուցիչներս կարողանում ենք դրական փոխկախվածություն կառուցել՝ առաջ բերելով ընդհանուր, փոխադարձ խմբային նպատակ, որը կհամախմբի աշակերտներին և կկենտրոնացնի միմյանց և սեփական ուսումնառության շուրջ։ Խմբային նպատակը առավել հզորանում է:

Այսպիսով՝ իրականցվում է ուսումնառություն, աշակերտները սովորում են իրար օգնել, իսկ ուսուցչից պահանջվում է խրախուսել սովորողների ջանքերը:

5.Օգտագործված գրականություն

1. Խաչատրյան Ս.Գ. «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի, 2006, 96 էջ:

2. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի. «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, 336 էջ:

3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ. «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ

4. Սահակյան Վ. Ա. «Համագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին», Երևան, Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004թ, 178 էջ: